ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23 սեպտեմբերի 2019թ.

Քաղաք Իջևան

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**23.09.2019թ. ժ.13$^{00}$-ին կայացած ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի**

1. **2018-2019 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները**

Զեկուցող՝ Մ.Ղազումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ

2. **Մարզի համայնքների 2019թ. առաջին կիսամյակի սեփական եկամուտների կատարողականների մասին**

Զեկուցող՝ Ա.Բաբլումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

3. **Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին**

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

4. **Տեղեկատվություն 2019թ. նախատեսվող առողջապահական ծրագրերի իրականացման մասին և գլոբալ բյուջեի ծավալներն՝ ըստ բուժհիմնարկների /առողջապահություն/**

Զեկուցող՝ Ռ.Տիգրանյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

5. **Համայնքներում թափուկների տրամադրման գործընթացի վերաբերյալ**

Զեկուցող՝ Ս.Գևորգյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ

6. **2019թ. Ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2019թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման մասին**

Զեկուցող՝ Գ.Մատինյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ

7. **Այլ հարցեր**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

## ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Հ.Զոբանյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները, գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, վարչությունների պետերը, բաժինների վարիչները, պատասխանատու մասնագետները, մարզխորհրդի անդամները:

Մարզխորհրդի 24 անդամներից ներկա էին 23-ը:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Հ.Զոբանյանը: Նա շնորհավորեց ներկաներին Հայաստանի անկախության տարեդարձի կապակցությամբ:

### 1. 2018-2019 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները

---

/Զեկուցող՝ Մ.Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ /

Զեկուցողը խոսեց ատեստավորված և տարրակարգ ստացած ուսուցիչների, մարզում իրականացվող նախադպրոցական միկրոծրագրերի, առարկայական օլիմպիադաների արդյունքների, միջոցառումների, ներառական կրթության ոլորտում առկա խնդիրների և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, դպրոցների ջեռուցման, վերանորոգման խնդիրների և ձեռնարկված միջոցների, սովորողների արտադասարանական պարապմունքների, ամառային հանգստի կազմակերպման, 2019թ կատարված կրթական բարեփոխումների ուղղությամբ իրականացված աշխատանքների, առաջադիմությունների և ձեռքբերումների մասին: Մ.Ղազումյանը նշեց, որ մարզպետարանի ենթակայության դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 1900-ի, որոնց մեծ մասն ունի բարձրագույն կրթություն: Յուրաքանչյուր տարի ատեստավորվում է ուսուցիչների 1/5-ը: Ատեստավորմանը նախորդում է ուսուցիչների վերապատրաստումը, որը իրականացվել է Կրթության Ազգային Ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում: 2018-19 ուսումնական տարում ատեստավորվել է 327 ուսուցիչ, 12 ուսուցչի շնորհվել է առաջին աստիճանի տարրակարգ, 1 ուսուցչի շնորհվել է երկրորդ աստիճանի տարրակարգ:

Նա նաև նշեց, որ արդեն 8-րդ տարին է, ինչ ՀՀ Տավուշի մարզն ընդգրկված է <<Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և

կրթական հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում>> ենթածրագրում: 2018-19 ուստարում մարզի 16 դպրոցներում գործել է նախակրթարան: Այս ուսումնական տարում բացվել է ևս մեկը: Քանի որ նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ, աշխատանքներ են տարվում մանկապարտեզներ և նախակրթարաններ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ: Մասնավորապես 2019թ. առաջին կիսամյակում կառուցվել կամ վերակառուցվել են հինգ մանկապարտեզ, ուր հաճախում են ավելի քան 300 երեխա:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մարզից մասնակցել են 62 աշակերտ, որոնցից մեկը արժանացել է I կարգի դիպլոմի (Նորաշենի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Տաթև Գրիգորյան, պատմություն): Ինը աշակերտ արժանացել են երկրորդ կարգի դիպլոմի, երկու աշակերտ ՝ երրորդ կարգի դիպլոմի, երեք աշակերտ ՝ գովասանագրի: Առարկայակա օլիմպիադաներին ընդհանուր առմամբ մասնակցել են 3000 աշակերտ: Մարզի հանրակրթական դպրոցներում 2018-19 ուստարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված պետական տոներին, հայտնի մարդկանց հոբելյանական տարեթվերին և այլն:

2018-19 ուս տարում մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող է 490 աշակերտ, որից 57 ծանր, 13 խոր ֆունկցիայի խանգարումով երեխաներ են:

Մ.Ղազումյանը ներկայացրեց, որ մարզի հանրակրթական դպրոցների համար առաջնային է ջեռուցման և շենքային պայմանների բարելավման խնդիրը: 76 դպրոցից 40-ը ջեռուցվել է փայտի վառարաններով, ինչը դժվարություն է առաջացնում թե վառելիքի ձեռքբերման, թե որակի առումով: Միջազգային կազմակերպությունների, բարերարների ներդրումային ծրագրերով անցած ուսումնական տարվա ընթացքում վերանորոգվել են դպրոցական ճաշարաններ, ապաստարաններ, լաբորատորիաներ, սանհանգույցներ: Մասնավորապես 2018-19 ուստարում Բերդի տարածաշրջանում Հայ Օգնության ֆոնդի աջակցությամբ գործարկվել է քիմիայի և ֆիզիկայի 11 լաբորատորիա: 2019-20 ուստարում ևս նախատեսված է շարունակել վերանորոգման աշխատանքները:

Զեկուցողը նշեց, որ կրթության կազմակերպման համար բարենպաստ պայմաններ ունենալու համար մարզի ղեկավարությունը ակտիվ համագործակցության մեջ է միջազգային և տեղական այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Վորլդ Վիժն, ՅՈՒՆԻՍԵՖ, ՀՕՖ, Հույսի կամուրջ և այլն, որոնց միջոցով բարելավվում են շենքային և գույքային պայմանները: Սովորողների արտադասարանական պարապմունքները դպրոցներում իրականացվում են համապատասխան խմբակներում: Բացի այդ աշակերտների մի գերակշիռ մաս հաճախում են արվեստի երաժշտական դպրոցներ, մարզադպրոցներ: Ամառային հանգիստ կազմակերպվել է Հանքավանի Լուսաբաց ճամբարում: Հուլիսի 1-ից օգոստոսի 27-ը երեք հերթափոխով հանգստացել են 190 երեխա: Այս հանգիստը կազմակերպվել է ՀՀ Կառավարության հատկացրած միջոցներով՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: Ամռան ընթացքում <<Վորլդ Վիժն>> կազմակերպության կողմից ևս կազմակերպվել է ամառային

հանգիստ Հանքավանում: Մի քանի փուլով հնգօրյա ճամբարներ են կազմակերպվել նաև Հայկական Կարմիր խաչի Իջևանի մասնաճյուղի կողմից:

Զեկուցողը ներկայացրեց նաև աշակերտների սննդի կազմակերպման գործընթացը, 2019 թվականին կատարված կրթական բարեփոխումների ուղղությամբ կատարված աշխատանքները, խոսեց առաջադիմության և ձեռքբերումների մասին /տեղեկանքը կցվում է/:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

## 2. Մարզի համայնքների 2019թ. ութ ամսվա սեփական եկամուտների կատարողականների մասին

---

/ Զեկուցող՝ Ա.Բաբլումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի 24 համայնքների 2019 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը 2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 3 մլրդ 956 մլն. 802.4 հազար դրամ, որից սեփական եկամուտները՝ 1 մլրդ. 136 մլն. 344.9 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 28.7 %-ը, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմում են 2 մլրդ. 820 մլն. 457.5 հազար դրամ (71.3 %), այդ թվում դոտացիան՝ 2 մլրդ. 659 մլն. 125.7 հազար դրամ (67,2 %), այլ տրանսֆերտներ՝ 161 մլն. 331.8 հազար դրամ (4.1 %):

2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2 մլրդ. 528 մլն. 88.4 հազար դրամ, որը կազմում է ութ ամիսների նախատեսվածի 87.2 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 659 մլն. 903.6 հազար դրամ կամ կատարվել է ութ ամսվա նախատեսվածի 81.6 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ՝ 58.1%:

2019 թվականի սեպտեմբեր 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել են հավաքագրվել 53 մլն. 401.1 հազար դրամով, այդ թվում գույքահարկի գծով՝ 35 մլն. 907.6 հազար դրամ, տեղական վճարներ՝ 23 մլն. 499.2 հազար դրամ, պետական տուրքեր՝ 3 մլն. 165.7 հազար դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 2 մլն. 450.6 հազար դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ սեպտեմբերի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ - 2019 թ. ինը ամսում նախատեսվել է 133.4 մլն. դրամ, հավաքագրվել է 91.2 մլն. դրամ, կամ կատարվել է 67.3 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 47.6% (սույն թվականի սեպտեմբերի 18-ին մարզի սահմանամերձ համայնքների չմշակվող հողատարածների հողի հարկի գումարները՝ 31.3 մլն. դրամ, փոխանցվել են համայնքների հող հարկի հաշվեհամարներին: Եթե հաշվի առնենք փոխանցված հողի հարկի գումարը, ապա սեպտեմբերի 18-ի դրությամբ հողի հարկի կատարողականը կկազմի 90.5 %, իսկ տարեկանի նկատմամբ՝ 64.0%),

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Ենոքավան 30.6 %, Խաշթառակ 32.2 %, Աճարկուտ 40.7 %, Աչաջուր 41.1 %, Իջևան 47.5 %, Գանձաքար 57.0 %, Այրում 58.5 %, Լուսաձոր 68.8 %, Գետահովիտ 69.5 % (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ - հավաքագրվել է 244.9 մլն. դրամ կամ կատարվել է 86.5 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 59.5 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վազաշեն 27.7 %, Գետահովիտ 43.6 %, Այգեհովիտ 52.7 %, Խաշթառակ 55.0 %, Ազատամուտ 59.4 %, Լուսաձոր 69.0 %, Իջևան 69.6 %, Բերքաբեր 71.5 % (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- տեղական տուրքեր – հավաքագրվել է 25.4 մլն. դրամ կամ կատարվել է 69.9 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 52.3 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Խաշթառակ 16.7 %, Ն. Ծաղկավան 20.8 %, Այգեհովիտ 40.0 %, Կողբ 49.9 %, Գանձաքար 53.6 %, Աչաջուր 55.1 %, իսկ Վազաշեն համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ – հավաքագրվել է 79.4 մլն. դրամ կամ կատարվել է 79.4 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 60.0 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Աչաջուր 27.2 %, Խաշթառակ 35.5 %, Կողբ 38.3 %, Լուսաձոր 44.7 % (սեպտեմբերի 20-ի դրությամբ 85.5%), Սևքար 58.8 %, Սարիգյուղ 68.4 %, Բերդ 69.9 %, Այրում 75.7 %, Դիլիջան 79.4 % (կցվում է ցանկը): Աճարկուտ, Լուսահովիտ, Ն. Ծաղկավան համայնքները սեպտեմբերի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձումներ չեն կատարել:

- տեղական վճարներ– հավաքագրվել է 193.9 մլն. դրամ կամ կատարվել է 81.3 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 60.0 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Խաշթառակ 9.0 %, Դիտավան 10.0 %, Այգեհովիտ 16.3 %, Ենոքավան 19.0 %, Գետահովիտ 59.1 % (կցվում է ցանկը):

ՀՀ Տավուշի մարզպետի համապատասխան գրություններով ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվել է ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել և ձեռնարկել կտրուկ միջոցներ տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտները հավաքագրելու, ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի ապառքներ ունեցող հարկատուների հետ ստեղծված իրավիճակը շտկելու, նախորդ տարիներից առաջացած հողի հարկի և գույքահարկի ապառքները հավաքագրելու ուղղությամբ:

Հուլիսի 1-ի դրությամբ, ըստ տեղեկատվական բազայի տվյալների, մարզի կտրվածքով հողի հարկի ապառքը կազմում է 592.0 մլն. դրամ, գույքահարկի ապառքը՝ 355.2 մլն. դրամ, որը չի համապատասխանում իրական ապառքներին:

Համայնքների ղեկավարներին կրկին անգամ առաջարկվում է հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաներում կատարել աշխատանքներ՝ կրկնակի կամ հաշվառումից հանված գույքը բազաներից հանելու և նախորդ տարիներին հավաքագրված

գումարները տեղեկատվական բազա մուտքագրելու համար, ինչը հնարավորություն կտա տեսնելու իրական ապառքների չափերը և կառուցվածքը:

Սեպտեմբերի 1-ի դրությամբ և օգոստոսի 1-ի դրությամբ հողի հարկի և գույքահարկի խոշոր՝ 500.0 հազար դրամ և ավելի, ապառքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օգոստոս ամսում նախորդ տարիներից առաջացած ապառքները նվազել են մոտ 7.7 մլն. դրամ, որից Կողբ համայնքում հավաքագրվել է 6.4 մլն. դրամ, իսկ Բերդ համայնքում կատարվել է 1.3 մլն. դրամի բազային տվյալների ճշտում:

Մեկ շաբաթից ավարտվում է 3-րդ եռամսյակը և անհրաժեշտ է որպեսզի համայնքների ղեկավարները վերլուծություններ կատարեն ինը ամսվա կտրվածքով թերհավաքագրված սեփական եկամուտների պատճառների վերաբերյալ և կազմեն հստակ ժամանակացույց՝ մինչև տարեվերջ սեփական եկամուտները 100 %-ով հավաքագրելու ուղղությամբ:

Զեկուցողը նշեց, որ սեփական եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների 28.7%-ը, որը ցածր ցուցանիշ է: Համայնքները պետք է նոր ռեսուրսներ փնտրեն տեղական բյուջեներում սեփական եկամուտների տեսակարար կշիռը մեծացնելու ուղղությամբ: Սեփական եկամուտների ըստ եկամտատեսակների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության մասով համայնքներում առկա են մեծ ռեսուրսներ: Ըստ հողային հաշվեկշռի մարզում կա համայնքային սեփականության 25.7 հազար հեկտար խոտհարք և արոտ, 5.9 հազար հեկտար վարելահող և 440 հեկտար բազմամյա տնկարկ: Մոտավոր հաշվարկներով նշված հողերի վարձակության տարեկան գումարները կազմում են մոտ 125-130,0 մլն. դրամ (2019 թվականի տեղական բյուջենում վարձակալության գումարները կազմում են 65.0 մլն. դրամ): Եթե հաշվի առնենք նաև պետական սեփականություն հանդիսացող գյուղնշանակության հողերը՝ 42.2 հազար հեկտար խոտհարք և արոտ, 890 հեկտար վարելահող, ապա պարզ է դառնում, որ իրոք համայնքներում կան մեծ ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան ավելացնել սեփական եկամուտները, որն էլ իր հերթին կնպաստի համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը:

Ա.Բաբլումյանն առաջարկեց համայնքների ղեկավարներին 2020 թվականի տեղական բյուջեների կազմման գործընթացում հաշվի առնել նշվածը և աշխատանքներ տանել գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության տալու և պայմանագրերը սահմանված կարգով կնքելու ուղղությամբ:

Ավարտելով իր զեկույցը, Ա.Բաբլումյանը նշեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

**<u>Հանձնարարվեց</u>**

**Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ Ա.Բաբլումյանին.**

- Սահմանամերձ չմշակվող հողերի հարկերի փոխհատուցման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

**Վ.Սուքոյանին, Ա.Նազարյանին**

- 3 շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ գյուղատնտեսական նշանակության վարձակալական հողերի պայմանագրերի կնքման վերաբերյալ:

**<u>Առաջարկվեց</u>**

**Համայնքների ղեկավարներին.**

- Սեփական եկամուտների ցածր կատարողական ունեցող համայնքներին՝ կտրուկ միջոցներ ձեռնարկել մինչև տարեվերջ գումարները 100 տոկոսով հավաքագրելու ուղղությամբ:

## 3. Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին

---

/Զեկուցող՝ Գ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի 2019թ. առաջին կիսամյակում մարզի համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է 571 ստուգում /նախորդ տարվա 855 -ի դիմաց/ որից՝ 406-ը առևտրի, 84-ը՝ հանրային սննդի և 81-ը՝ կենցաղային ծառայությունների օբյեկտներում: Արդյունքում արձանագրվել է 27 խախտում՝ նախորդ տարվա 19-ի դիմաց և սահմանված կարգով նշանակվել 230 հազար դրամ տուգանք, նախորդ տարվա 240 հազար դրամի դիմաց: Տեղեկատվությունը ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի, շարունակվել են մարզի համայնքներում իրականացվել ուսումնասիրություններ առևտրի կազմակերպման կանոնների՝ մասնավորապես ապրանքների պահպանման, պիտակավորման, ապրանքային տեսքի պահպանման, տակդիրների և աղբարկղերի տեղադրման,

կշռափաթեթավորման, սանիտարահիգիենիկ պայմանների, տեխնոլոգիական սարքավորումների, հաշվիչ դրամարկղային մեքենաների, չափիչ և ստուգիչ սարքերի և ցուցանակների տեղադրման աշխատանքների և այլ գործառույթների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում տարվել են բացատրական աշխատանքներ:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համայնքներում պարբերաբար խախտվում են առևտրի և ծառայությունների մասին օրենքի որոշ դրութներ, որի վերաբերյալ ըստ համայնքների կողմից ներկայացված հաշվետվությունների կամ չեն նշվում, իսկ երբեմն բավարարվում են միայն զգուշացմամբ՝ պատժամիջոցներ չեն կիրառվում: Ոլորտի գործունեության բարելավման նպատակով կատարվել են որոշակի աշխատանքներ: Չնայած կատարած աշխատանքներին՝ դեռևս խնդիր են մնում փողոցային առևտուրը, անասունների փողոցային մորթը, սգո ծիսակատարությունների համար նախատեսված պարագաների ոչ սահմանված կարգով պահպանելն ու վաճառքը և այլն, որը նաև համայնքների համապատասխան պատասխանատուների կողմից օրենսդրության չիմացության արդյունք է:

Գ.Հարությունյանը նշեց, որ ներկայումս ձեռնարկվում են միջոցներ, ինչպես տեղական հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցով համայնքներում ոլորտի պատասխանատու մասնագետների համար կազմակերպելու վերապատրաստման դասընթացներ՝ վարչական վարույթի իրականացման, տուգանքների նշանակման և գանձման թեմաներով: Առևտրի և ծառայությունների մասին օրենքի դրույթները հստակ կիրառելու նպատակով համայնքների պատասխանատուներին նախատեսվում է տրամադրել մեթոդական ուղեցույցներ: Նախատեսվող սեմինարներին կմասնակցեն ինչպես ՏԻՄ, այնպես էլ առևտրի և ծառայությունների ոլորտի պատասխանատու ներկայացուցիչներ:

Ավարտելով իր զեկույցը, Գ.Հարությունյանը նշեց, որ համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում վերահսկողության իրավասություններ ունեցող պատասխանատու մասնագետների ցանկը ճշտելու, մատուցվող ծառայությունների նկատմամբ վերահսկողությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով առաջիկայում շրջաբերականներ կուղարկվեն մարզի համայնքների ղեկավարներին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

**4. Տեղեկատվություն 2019թ. Նախատեսվող առողջապահական ծրագրերի իրականացման մասին և գլոբալ բյուջեի ծավալներն՝ ըստ բուժհիմնարկների**

---

/Զեկ.՝ Ռ.Տիգրանյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ կառավարության 2019թ. Ծրագրում շեշտադրում է արված առողջապահության որակի, հասանելիության, հիվանդությունների կանխարգելման, մոր և մանկան, վերարտադրողական առողջության բարելավման քաղաքականության իրականացման վրա:

ՀՀ Տավուշի մարզում պետպատվեր են իրականացնում 27 բուժհաստատություններ, որոնցից 3 բժշկական կենտրոնները /Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի ԲԿ-ներ/ ՓԲԸ-ներ են, Դիլիջանի <<ԻՌ-ՎԻՆԳ>> բժշկական կենտրոնը ՍՊԸ է, Աչաջրի, Արծվաբերդի և Այգեձորի առողջության կենտրոնները ՊՈԱԿ-ներ են, 15 առողջության առաջնային պահպանման կենտրոններ ՊՈԱԿ-ներ են, 3-ը՝ ՀՈԱԿ-ներ /Գանձաքար, Կողբ, Բերդավան/ և 1-ը ընտանեկան բժշկի գրասենյակ է /<<Արևհատ և Անի>> ՍՊԸ/:

Մարզի բուժհաստատություններում աշխատում են 218 բժիշկներ, 520 միջին բուժանձնակազմ և 247 տեխնիկական աշխատողներ, մոտ 1000 աշխատակից: Մահճակալային ֆոնդը կազմում է 240 մահճակալ, որից 76-ը Իջևանի ԲԿ-ում, 40-ը <<ԻՌ-ՎԻՆԳ>> ՍՊԸ-ում, 60-ը Նոյեմբերյանի ԲԿ-ում, 20-ը Արծվաբերդի ԱԿ-ում, 10-ը Աչաջրի ԱԿ-ում, 4-ը Այգեձորի ԱԿ-ում: Տավուշի մարզպետարանի ենթակայության բուժհիմնարկների պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության և սպասարկման բյուջեն կազմում է 1557245.0 դրամ: Վճարովի ծառայությունները կազմել են 180777.0 դրամ /հաշվարկներում չեն ներառվել ՍՊԸ-ների տվյալները:

Ռ.Տիգրանյանը խոսեց նաև մարզպետարանի ենթակայության ՍԱՏԳ-ների գործառույթների մասին /տեղեկանքը կցվում է/, ՀՀ ԱՆ /առանց ապարատի պահպանման ծախսերի/ 2019 թվականի բյուջետային ծախսերի, 2019 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող առողջապահական պետական նպատակային ծրագրերի, մարզպետարանի ենթակայության առողջապահական ոլորտի ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների գլոբալ բյուջեների մասին /տեղեկանքները կցվում են/:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

## 5. Համայնքներում թափուկների տրամադրման գործընթացի վերաբերյալ

---

/Զեկուցող՝ Ս.Գևորգյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ կառավարության որոշմամբ տարիներ շարունակ անտառամերձ համայնքների ընտանիքներին անտառի թափուկից անվճար վառելափայտի տրամադրման արդյունքում, կախված տարածաշրջանից, թափուկի քանակը պակասել է՝ կամ չկա կամ շատ հեռու է բնակավայրերից մինչև 50-60կմ:

ՈԻստի հարցը քննարկվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Անտառային կոմիտեի, «Հայանտառ» ՊՈԱԿ –ի ղեկավարների ու մասնագետների, ինչպես նաև մարզի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի և «Դիլիջան» ԱՊ –ի տնօրենների հետ:

Անտառտնտեսությունների և ազգային պարկի առջև խնդիր է դրվել անվճար թափուկ և քամատապալ, ձյունակոտոր վառելափայտով /որի արժեքը էժան է, մինչև

6000 դրամ/ սկզբում ապահովել անապահով բնակչության պահանջները՝ համայնքապետերի կողմից տրված ցուցակների համաձայն:

Համայնքապետերի կողմից տրված ցուցակներում ընդգրկված են մարզի բոլոր բնակավայրերի ընտանիքները /բացի բազմաբնակարան շենքերի/:

Մարզում թույլտվություն կա իրացնելու 22462 խ/մ վառելափայտ, /թափուկը չհաշված/ որից՝

1. խնամքի և սանիտարական հատումների 14098 խ/մ, որից՝ ըստ տնտեսվարողների.
   - «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 949 խ/մ
   - «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 1990 խ/մ
   - «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 4639 խ/մ
   - «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 6520 խ/մ
2. քամատապալ և ձյունակոտոր 8364 խ/մ, որից՝ ըստ տնտեսվարողների.
   - «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 390 խ/մ
   - «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 460 խ/մ
   - «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 1176 խ/մ
   - «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղ - 1838 խ/մ
   - «Դիլիջան» ԱՊ - 4500 խ/մ:

18.09.2019 թ. դրությամբ իրացվել և հաշվառվել է 23 053 խ/մ /խ/, որից 12 148 խ/մ թափուկ, իսկ 10 905 խ/մ խնամքի և սանիտարական հատումներից, ինչպես նաև քամատապալ և ձյունակոտորից:

Ս.Գևորգյանը նշեց, որ խնամքի և սանիտարական հատումների, ինչպես նաև քամատապալ և ձյունակոտորի թույլատրվածից, որը կազմում է 22 462 խ/մ իրացվել է 10 905 խ/մ, իրացման ենթակա մնում է 11 557 խ/մ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

**6. 2019թ. ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2019թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման մասին**

---

/Զեկուցող՝ Գ.Մատինյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 590-Ն որոշման պահանջներով և ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թվականի հունիսի 6-ի « Տավուշի մարզում 2019 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու մասին» թիվ 80-Ա որոշումով հաստատվել է Տավուշի մարզի զինվորական կոմիսարիատի ամառային զորակոչային հանձնաժողովի կազմը, հանձնարարվել է մարզի զինվորական կոմիսարին՝ 2019

թվականի ամառային զորակոչը անցկացնել սահմանված կարգով, հանձնարարվել է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ, առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրավասության սահմաններում ապահովել ամառային զորակոչի կազմակերպումը, հանձնարարականներ են տրվել և առաջարկվել կազմակերպությունների ղեկավարներին՝ ամառային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու համար:

2019 թվականի հուլիս ամսին մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերին քննարկվել են 2019 թվականի ամառային զորակոչի ընթացքի և խնդիրների մասին, «Ես եմ», «Պատիվ ունեմ» ծրագրերի կատարման, տարկետման ներկայացված անձնական գործերի, ժամկետային զինծառայությունից խուսափող պատանիների վերաբերյալ հարցեր: Նիստերում նշվել է զորակոչի՝ որպես պետական կարևորագույն միջոցառման նշանակությունը: Իրադարձությունները փաստում են, որ մեր հանրապետության անվտանգության միջավայրը դեռևս մնում է փխրուն, հղի ցանկացած իրադարձություններով և զարգացումներով, ուստի այն կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները, որոնք առնչվում են նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դաստիարակման և ուսուցման խնդիրներին, պետք է այս հարցը դասեն ամենակարևորագույնների շարքում և ամենօրյա հետևողականություն ցուցաբերեն զորակոչին առնչվող միջոցառումները ժամանակին և սահմանված կարգով իրականացնելուն: Այստեղ կարևորվում է հատկապես համայնքների դերը:

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին կցագրման միջոցառումներն իրականացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներին համապատասխան:
Հաշվետու ժամանակահատվածում մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահի կողմից հաստատվել են մարզի զինկոմիսարիատի ներկայացրած աշխատանքային պլանները՝ ռազմական ուսումնական հաստատությունները դիմորդ-թեկնածուներով համալրելու, տեղամասին կցագրված նախազորակոչիկներին զինվորական ծառայության նախապատրաստելու հիմնական միջոցառումների, ուսումնական հաստատությունների ՆԶՊ ծրագրերով ավագ դասարանի տղաների հետ երկօրյա դաշտային պարապմունքների, ՆԶՊ ուսումնասիրող պատանիների հետ հայրենասիրական դաստիարակչական ընդհանուր միջոցառումների, ուսումնական հաստատությունների զինղեկների հետ եռօրյա մեթոդական հավաքների վերաբերյալ:

Վերջին տարիներին մարզի դպրոցներում բավական դրական տեղաշարժ է կատարվել ՆԶՊ դասարանների, փառքի սրահների ձևավորման, սպորտ հրապարակների, զենքի պահպանման սենյակների կահավորման, ամրացման, ռազմամարզական խաղերի կազմակերպման, հայրենասիրական դաստիարակության և հայոց պատմության, ֆիզկուլտուրա առարկաների ուսումնական և քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական բազաների համալրման ուղղությամբ: Բերդ, Նոյեմբերյան համայնքների ավագ, Մովսես և Չինարի համայնքների միջնակարգ դպրոցներում և թիվ 21/127

զորամասում տեղադրվել են «Մենամարտ» վարժասարքեր, որոնցից համաձայն պլան-ժամանակացույցի կարող են օգտվել նաև Բերդ և Նոյեմբերյան համայնքների մնացած դպրոցները: Մարզի սահմանամերձ համայնքներում «Մենամարտ» վարժասարքեր տեղադրելու գործընթացը հարկավոր է շարունակել:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ զինապահեստներով և զենքով ապահովված են 59 դպրոցներ: Մարզպետի կողմից հանձնարարություն է տրվել 2019 թվականին վերջնականապես ավարտել բոլոր դպրոցներում ՆԶՊ ծրագրով անհրաժեշտ ուսումնական դասարանների և ուսումնական զենքի ապահովումը:

2019 թվականի հուլիս ամսին մարզում իրականացվել է ամառային զորակոչ: Տավուշի մարզի զինկոմիսարիատում և մարզի զինկոմիսարիատի բոլոր բաժանմունքներում մեկնարկը տրվել է հանդիսավոր միջոցառումներով՝ հրավիրվել են գեղարվեստական խմբեր, նորակոչիկներին բանակ ճանապարհեցին Տավուշի մարզպետը, Տավուշի թեմի հոգևոր առաջնորդը, մարզի զինվորական կոմիսարը, համայնքապետերը, զորակոչիկների ծնողները, ընկերները, պատերազմի վետերանները, ազատամարտիկները, զինկոմիսարիատի պատասխանատու աշխատակիցները, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները: Ելույթներով հանդես եկան և հայրենիքի ապագա պաշտպաններին բարի ծառայություն մաղթեցին Տավուշի մարզպետը, Տավուշի թեմի հոգևոր առաջնորդը, մարզի զինվորական կոմիսարը, համայնքապետերը, ծնողներ, նորակոչիկներ:

Համայնքների ղեկավարները համայնքներում կազմակերպել են հանդիսավոր երեկոներ՝ մասնակից դարձնելով նախազորակոչային տարիքի պատանիների, պատերազմի վետերանների:

Մինչ ծառայության մեկնելը ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ նորակոչիկները այցելել են Մատենադարան, Ծիծեռնակաբերդ և Երևանի պատմության թանգարան:

ՀՀ Տավուշի մարզի զինկոմիսարիատի 2019 թվականի ամառային զորակոչին պլան-առաջադրանք է եղել 310 զորակոչիկ, զորակոչվել են ՀՀ ԶՈՒ 351-ը: Առաջադրանքը կատարվել է 113 տոկոսով, որից 7-ը զորակոչվել են «Ես եմ» ծրագրով:

Զորակոչին ենթակա են եղել 575 զորակոչիկ, ներկայացել են 568-ը, որոնցից՝ 2001 թվականի ծնվածներ՝ 357 զորակոչիկ:

Տրվել է տարկետում 140 զորակոչիկի, որոնցից՝ ուսումը շարունակելու նպատակով՝ 11 զորակոչիկ, որոնցից 10-ը՝ «Պատիվ ունեմ» ծրագրով, ընտանեկան դրության պատճառով տարկետում է տրվել 1 զորակոչիկի: Տրվել է տարկետում բուժման նպատակով և առողջական վիճակի պատճառով 6 ամսից 3 տարի ժամանակով՝ 118 զորակոչիկի: Փոխանցվել են պահեստազոր 77 զորակոչիկ, որոնցից առողջական վիճակի պատճառով՝ 76-ը, ընտանեկան պատճառով՝ 1 զորակոչիկ:

Զորակոչից խուսափած 5 զորակոչիկի անձնական գործերը ուղարկվել են Տավուշի մարզի քննչական մարմիններ:

ՀՀ ՊՆ և օտարերկրյա պետությունների ՌՈՒՀ-եր ընդունվելու համար Տավուշի մարզի զինկոմիսարիատ դիմում են ներկայացրել 4 դիմորդ-թեկնածուներ, ընդունվել են 3-ը:

2019 թվականի ամառային զորակոչին Տավուշի մարզի «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» ուսումնական կազմակերպության պլան-առաջադրանք է եղել 34 վարորդ–մասնագետներ, զորակոչվել են ՀՀ ԶՈՒ 35 վարորդ:
2019 թվականի ամառային զորակոչի ենթակա զորակոչիկների պարտադիր պատվաստումները կատարվել են գրաֆիկին համապատասխան:

2019 թվականի փետրվարի 4-ին ընդունվել է ՀՀ Տավուշի մարզպետի «ՀՀ Տավուշի մարզում 2003 թվականի ծնված քաղաքացիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման վերաբերյալ» թիվ 10-Ա որոշումը և հաստատվել է մարզի զինկոմիսարիատի կողմից ներկայացված տեղական զորակոչային հանձնաժողովի կազմը: Տրվել են հանձնարարականներ կցագրման աշխատանքների նախապատրաստումը և անցկացումը տարածքներում իրականացնել 2019 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին: Հաստատվել է 2003 թվականի ծնված պատանիների զինծառայության նախապատրաստման աշխատանքային պլանը: Հանձնարարվել է համայնքների ղեկավարներին կցագրման ենթակա պատանիների ցուցակները սահմանված կարգով տարածքային զինկոմիսարիատներ ներկայացնելու ուղղությամբ:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի ՀՀ Տավուշի մարզում 2019 թվականի ձմեռային զորակոչի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում և պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի («Ես եմ», «Պատիվ ունեմ»), կազմակերպվող սպայական դասընթացների և ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ զորակոչիկների իրազեկման նպատակով, կարևորելով մարզի ուսումնական հաստատությունների սաների կարգավարժ վարքի ձևավորման ու պատանիների նախազորակոչային պատրաստության խնդիրները, մարզի զինվորական կոմիսարիատի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում պարբերաբար անց են կացրել հանդիպումներ մարզի համայնքների ղեկավարների, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և զինղեկների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են առաջիկա ծրագրերը՝ Տավուշի մարզի երիտասարդների ներգրավվածության անհրաժեշտության և մարզում սպայական դասընթացների ու ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության պայմանների վերաբերյալ:

Ավարտելով իր զեկույցը, Գ.Մատինյանը նշեց, որ վերոնշյալ ծրագրերի իրականացման նպատակով մարզի բոլոր ուսումնական հաստատություններում շարունակվում են իրականացվել քարոզչական աշխատանքներ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

## 7. Այլ հարցեր

Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանը հանդես եկավ հայտարարությամբ, ներկայացնելով, որ հնարավորություն է ստեղծվել ՌԴ Ստավրոպոլի երկրամասից Տավուշի մարզ ներկրելու աշնանացան ցորենի և գարու էլիտար սերմացուներ /1 կգ արժեքը 200 դրամ համայնքում/, ցանքի օպտիմալ ժամանակահատվածը հոկտեմբերի 15-ից 20-ն է: Առաջարկվում է համայնքների ղեկավարներին՝ հնարավորինս սեղմ ժամկետում ճշտել համայնքի վճարունակ պահանջարկը և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

**ՄԱՐԶՊԵՏ** **Հ.ՉՈԲԱՆՅԱՆ**

Արձանագրեց՝ Տ.Անտոնյանը